

AGBU

ՀԲԸՄ-ն նախաձեռնում է սիրիահայության աջակցության նոր արշավ

Հայկական բարեգործական ընդհանուր միությունն անցնող տարիներին սիրիահայության օգնությանն ուղղված մարդասիրական հսկայածավալ ծրագրեր է իրականացրել: Միության հիմնած սիրիահայության օգնության մեկ միլիոն ԱՄՆ դոլարի հիմնադրամին կատարված նվիրատվությունների, կազմակերպված հանգանակությունների ու նվիրահավաքների շնորհիվ այդ գումարն արդեն հասել է 3 միլիոն ԱՄՆ դոլարի սահմանագիծը: Օգնության ծրագրերի ծանրակշիռ մասն իրականացվել է տեղում՝ Սիրիայի Հալեպ, Դամասկոս, Քամիշլի, Քեսապ և այլ հայաբնակ բնակավայրերում: Օգնությունը Սիրիայում շարունակվում է: Մնունդ, խմելու ջուր, վառելանյութ, բժշկական օգնություն, ձմեռային պիտույքներ, ապաստարան և տարաբնույթ այլ օգնություններ: Սիրիայում ընթացող պատերազմի պայմաններում հայ համայնքը նյութականից բացի և գուցե առաջին հերթին ունի բարոյական օգնության կարիք: Հայկականբարեգործական ընդհանուր միությունն ավելի քան 3 տարի սիրիահայությանը տալիս է թե՛ մեկը, թե՛ մյուսը: «Սիրիահայության մարդասիրական շտապ օգնություն» ծրագիրն սկսել է գործել ռազմական իրադրության առաջին ամիսներից: Հայաստանում նույնպես, առաջին իսկ օրերից, սիրիահայերի բնակվածի, բժշկական ծառայությունների, ֆինանսական օգնության ու սննդի ծախսերի փոխհատուցման ծրագրեր են իրականացվել, որոնք այսօր էլ շարունակվում են: Ամենահին, ամենամեծ ու համահայկական այս կազմակերպությունը սիրիահայության օգնության համար այժմ սկսել է հանգանակության նոր արշավ:



ՈՒՍՈՒՄ Ն ԸՆԴԴԵՄ պատերազմի



Ապագան հորիզոնում երևում է, եթե ներկայում ակտիվ է ուսյալ սերունդը: Այս ճշմարտության գիտակցմամբ ՀԲԸՄ-ն, Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամը, Սփյուռքի և ԿԳ նախարարությունները 2013-ից համատեղ իրականացնում են Հայաստանի բարձրագույն ու միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորող սիրիահայ ուսանողների ուսման վճարների փոխհատուցման ծրագիրը: 2013-14 ուսումնական տարում սիրիահայ 380 ուսանողներ օգտվեցին այս ծրագրից: ՀԲԸՄ-ն 2014-15 ուսումնական տարում էլ շարունակել



է ծրագիրը: Տարեկան հատկացվել է 130 հազար դոլար: Նույնքան գումար է տրամադրել նաև Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամը: ՀՀ կառավարությունն իր հերթին սիրիահայ ուսանողների համար կիրառում է զեղչեր, բացի այդ պետությունից հատկացվում է հավելյալ գումար: Հայաստան տեղափոխվող սիրիահայ ուսանողների թիվը տարեցտարի ավելանում է: Հաշվի առնելով այս հանգամանքն ու ծրագրում հնարավորին չափ շատ ուսանողներ ընդգրկելու մոտեցումը, ՀԲԸՄ-ն ու գործընկերները սկզբնական նախապատվությունը տալիս են բակալավրիատի ուսանողների ուսման վարձերի փոխհատուցմանը, քանի որ դիմողների մեծ մասը այս բաժնում են սովորում: ՀԲԸՄ Հայաստանի տնօրենի պաշտոնակատար Հովիկ Յորդեքյանն ընդգծում է, որ սիրիահայ ուսանողների հիմնահարցերի կարգավորման խնդրի շուրջ պետություն-համահայկական կառույցներ գործակալությունը երեք տարի շարունակ դարձել է Հայաստան-Սփյուռք միության լավագույն դրսևորումներից մեկը: «ՀԲԸՄ միությունը կրթաթոշակ տրամադրելու մեծ փորձ ունի և պիտի շարունակի ծրագիրը», ասում է նա:

Արվեստն ընդդեմ պատերազմի



«Ջեյթունցիները», «Գարուն էր», «Երեք սերունդ», «Կարոտ», «Հաց հանապազօրյա», «Արդարադատություն»։ Զուլում Գրիգորյանը Ցեղասպանության թեմայով շարքն ուղղել է ի նպաստ սիրիահայերի: 85-ամյա ժողովրդական նկարիչն ու արվեստում նրան հետևող որդին՝ Մուշեղ Գրիգորյանը, իրենց 57 աշխատանքներն աշխանը ներկայացրեցին ցուցահանդես-վաճառքի: Հայր և որդի Գրիգորյանները վաղուց էին որոշել ձեռք մեկնել



Սիրիայում ապրող հայրենակիցներին: Երկար էին փնտրել հուսալի գործընկեր: Ի վերջո, Մուշեղի ընկերը հուշել է Հայկական բարեգործական ընդհանուր միության անունը: «Ցուցադրությունը պետք է ցուցադրական չլինի, չպետք է բղավի, թե ես ինչ լավ նկարիչ եմ», - վստահ է Զուլում Գրիգորյանը. «Ցուցադրությունը պետք է հանուն բարության լինի»:



ՀԲԸՄ Հայաստանի տնօրենի պաշտոնակատար Հովիկ Եորդեկյանը հույս ունի, որ Միության ու հայր և որդի Գրիգորյանների գործակցությունը կշարունակվի. «Արվեստի և բարեսիրության համատեղումը շատ հետաքրքիր արդյունքներ կարող է տալ» ասում է նա: Նկարիչներ Զուլում և Մուշեղ Գրիգորյանների ցուցահանդես-վաճառքի հասույթը ՀԲԸՄ-ն տրամադրելու է սիրիահայերի օգնության ծրագրերին:

Հողն ընդդեմ պատերազմի

Սիրիական քաղաքացիական պատերազմը Արցախ է բերել տասնյակ սիրիահայ ընտանիքների: Արցախում նոր հույս և տուն գտած ընտանիքների մեծ մասը Սիրիայի Քամիշլի շրջանից են: Նրանց բնակարանային ու կենցաղային խնդիրների լուծմանն օգնում են և՛ ԼՂՀ կառավարությունը, և՛ ՀԲԸՄ-ն: Սիրիահայերը արդեն ցորեն ու գարի են ցանել:

2 տարի առաջ ՀԲԸՄ-ն հողագործությամբ զբաղվող սիրիահայ այդ ընտանիքների համար սկսեց գյուղատնտեսական աջակցության ծրագիր: «Չերչյան ընտանիք» հիմնադրամի առատաձեռն նվիրատվությամբ, արցախաբնակ սիրիահայերին անհատույց տրամադրվեց գյուղտեխնիկա՝ Բելառուս MT3-82.1 մակնիշի 3 տրակտոր, 2 սերմնացան, ցաքաններ, պարարտանյութերի ցրիչներ, թունաքիմիկատների սրակիչ: Փոխհատուցվում է նաև գյուղտեխնիկայի գործարկման համար անհրաժեշտ վառելանյութի ծախսերը: Պատրաստվել է տրակտորների կայանատեղի:

